

✓
ԳԵՂԱՄ ՏԷՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ՝

ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

281.6
Հ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ


1925 ՕԳՈՍՏՈՍ 31 — 1926 ԱՊՐԻԼ 15



ԳԱՀԻՐԷ

Տպարան Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1926



ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1925 Օգոստոս 31 — 1926 Ապրիլ 15



Գերապատիւ

Տ. Թորգոմ Ս. Արեպա. Գուտակեան

Առաջնորդ Հայոց Եզիպոստի եւ.

Նախագահ Պատ. Թեմական Ժողովոյ

Ա Ս Տ

Պատ. Թեմական Ժողովն իր 28 հոկտ 1925 թուակիր պատճռագրով Ժողովիս նստաւոյանը երկարածգած եր մինչեւ յաջորդին ընտրութիւնը: Երեսփոխանական ընտրութեանց հետեւանօք, այս ժամանակամիջոցը բաւական երկար տեւած ըլլալով, պարտք կը համարենք մեր նախորդ Տեղեկագրին ընդգրկած ժամանակաւոյանէն (1923 Յունիս 20 — 1925 Օգոստոս 31) վերջ Ժողովիս կողմէ տնօրինուած գործոց եւ ազգ. անցքերու ընդհ. վիճակին մասին յաւելուածական ծանօթութիւններ պարունակող սոյն գրութիւնը Զեր Բարձր Սրբազնութեան միջոցաւ ներկայացնել Պատ. Թեմական Ժողովոյ:

Խորին յարգանքօք եւ որդիական ակնածանքօք

Ի Դիմաց Քաղ. Ժողովոյ

Ատենադպիր

Ատենապետ

Տֆ. Ա. ՏԵՐՄԱՐԳԱՐԵԱՆ

Տֆ. Ս. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

Կառավարութիւնը, Մարմինայի կից գետինը զեղչով գնելու մեր առաջարկը մերժած և փոխարժէքն ալ միանը-
ուագ և իսկոյն վճարելու տեսակէտին վրայ պնդած ըլլա-
լով, Ժողովս ստիպուեցաւ միջոցներ տնօրինել այդ գումա-
րը իսկոյն վճարելով հողին տէր դառնալու:

Կալուածոց Տիար Տնօրէնը այս առթիւ առաջարկ ներ-
կայացուցած էր այդ գումարը հայթայթելու հետեւեալ
կերպով.

Ա.— Ծախել Մարմինայի պատկանող ֆում էլ Խալիկի
կալուածը, հին ու կիրաւեր տուն մը, գնահատեալ 900 եգիպ-
տական ոսկի:

Բ.— Տրամագրել Եկեղեցւոյ Հոգաբարձութեան երկամ-
եայ խնայողութիւններուն գումարը 280 եգ. ոսկի:

Գ.— Տրամագրել 150 ոսկի Ազգ. մատուկէն: Ընդամէնը
1310 ոսկի:

Ժողովս ընդունելի գտաւ կալ. Գր. Տնօրէնին այս առա-
ջարկը և հողը Տօմէն-ի վարչութեան երկրաչափին կողմէ
Առաջնորդարանիս ներկայացուցիչներուն յանձնուեցաւ 1926
Մարտին պահանջուած 1283, 600 ոսկիի վճարման փոխարէն:
Մի քանի շաբաթէն, երբ քաղաքի բնակչութեան ձեւակերպու-
թիւններն աւարտին, կալուածական արձանագրութիւնը պի-
տի կատարուի ըստ այնմ:

Վերոգրեալ 1283, 600 եգ. ոսկիի գումարը վճարուեցաւ

Աղքատախնամի վիճակահանութեան պահեստէն, որ պիտի ամբողջացուի դարձեալ, հետեւեալ կերպով.— Նոր գերեզմանատան բաժնէն ծախուելիք հողերու և գերեզմանաթաղերու գինն, փոխանակ Միաց. Հոգաբարձութեան գանձը մանելու, պիտի ամփոփուի և պիտի յատկացուի Աղքատախնամի պարտքը վճարելու: Պարտքին մնացեալ կարելոր մասը անշուշտ պիտի հատուցուի Ֆուլ էլ իջլիկի տան վաճառումովն, որուն ձեռնարկուած է արդէն:

Միւս կողմէ, նկատելով որ թէև կառավարութիւնը հետեւանք չէ տուած հողը ձրի գնելու մեր առաջարկութեան, սակայն և այնպէս պատասխանն ալ բացարձակապէս ժխտական չէ եղած, այլ ըսուած է միայն թէ պետական հողեր ձրիաբար կը տրամադրուին միայն Երեսփ. Ժողովոյ որոշմամբ, ի մօտոյ, երբ Եգիպտոս. Բարլամէնթ-ը գումարուի այս մասին պէտք եղած դիմումը հարկ պիտի ըլլայ կատարել: Նոյնպէս, գնուած հողը հանրային նպատակի մը գործածուելու սահմանուած ըլլալուն համար, դիմում պիտի ըլլայ յառաջիկային որպէսզի Առաջնորդարանս ետ ստանայ քրանսֆերիթօն-ի ծախքերն ալ:

ՀՈԳԱԲԱՐԶՈՒԹԻՒՆ.— Եկեղեցւոյ և Մարմինայի Հոգաբարձութիւնն անփոփոխ կազմով իր պաշտօնը շարունակած է և երկամեայ շրջանին լրման առթիւ իր հրաժարականը ներկայացուցած՝ զոր Ժողովս անշուշտ մերժած է յանձնարարելով որ Հոգաբարձութիւնն իր պաշտօնը շարունակէ մինչեւ իր յաջորդին ընտրութիւնը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵՐՈՒԹԻՒՆ.— Ծ/սատէր և հիւր քահանաներն նոյնութեամբ շարունակած են իրենց պաշտօնը: Սոյն ութամսեայ ժամանակաշրջանին, հիւր քահանայից վրայ աւելցած է նաեւ Տ. Բէնիամին քհ. վաներեան, որ Երուսաղէմէն եկած է իր որդւոյն մօտ, և այդ առթիւ հետեւաբար կը քահանայագործէ Ս. Աստուածածի՛ն եկեղեցւոյ մէջ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Ս. ԱՌԱՋՆՈՐԴ ԷԼՅՈՐ. — Ժողովս, պաշտօնէ քաշուելէ առաջ, տեղեկագրի սոյն յաւելուածական մասով կ'ուզէ Պատ. Թեմական Ժողովիդ հաղորդել իր անայլայլ հիացումն վիճակիս Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Գուշակեանի անձին և գործունէութեան համար, որով Ն. Գերապատուութիւնը, իր անձին դէմ եղած ցաւալի պայքարներու գիմագրաւելով, շարունակած է անվհատ աշխատիլ և իր հովանին անպակաս ընել Եգիպտահայ համայնքին վրայէն: Իր անձին կը պարտինք գաղութիս բազմաթիւ հանրագուտ ձեռնարկներուն յաջողութիւնը, զորս մի առ մի թուելը շատ երկար պիտի ըլլար: Իբր ազգ. գործոց ներքին անցքերուն մօտէն տեղեակ ու ձեռնհաս մարմինը, Ժողովս պարտք կը համարի սոյն յիշատակութիւնն ընել հոս, Ժողովրդեան ներկայացուցիչներէ կազմուած Պատկառելի Թեմական Ժողովիդ ի գիտութիւն:

ՊԱՇՏՏՈՆԵՌԻԹԻԻՆ. — Առաջնորդարանի պաշտօնէութեան վերակազմութիւնը, որուն ակնարկած էինք Եպագրեալ տեղեկագրին մէջ, արդէն իսկ սկսած է տալ ակնկալուած բարի արդիւնքը: Ըլլայ օտար հաստատութեանց, դրամատուններու թէ անհատներու, ըլլայ ազգային Ժողովրդական խաւերու հետ շփման մէջ գիւանատունը իր կոչումին բարձրութեան վրայ գտնուած է: Սոյն ութամսեայ շրջանին պաշտօնէ դադրեցուցուած է Արաբերէնի քարտուղար Էմիլ Աւատ, լեզուագարութեան պատճառաւ և իր պակասը լրացուցած են Տեարք Զ. Քէսէճեան և Զ. Ապտօ, որով Առաջնորդարանս իբր 100 ոսկւոյ խնայողութիւն մը ապահոված է: Ինքնաբերաբար հրաժարած է նաեւ քատուղար Պ. Յ. Յովսէփեան, որուն իբր յաջորդ Երուսաղէմէն հրաւիրուած է Պր. Վահրամ Խաչիկեան:

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

Վարժարանի Հոգաբարձութիւնը, ըստ առաջնոյն, կը շարունակէ իր եռանդուն պաշտօնավարութիւնը: Տնօրէն Պր. Կիրակոսեան եւս նոյնպէս: Ուսուցչական կազմին մէջ կարեւոր փոփոխութիւն ըլլալով կայ միայն Պր. Լ. Թաշճեանի հրաժարումը: Յիշեալը Կիպրոսի Մեղգոնեան Կրթական Հաստատութեանց Ընդհ. Տնօրէն նշանակուած ըլլալով, իր Ֆրանսերէնի դասերը յանձնուած են Պր. Գ. Տիւրկէրեանի: Պերլիցեան վարժարանը, ըստ առաջնոյն, կը հայթայթէ անգլիերէնի և ֆրանսերէնի եւրոպացի ուսուցիչներ: Պէրլիցի տնօրէնը անձամբ կ'աւանդէ ֆրանսերէնը. միւս ճիւղերը կ'աւանդուին ըստ ծրագրի:

Վարժարանը ընթացիկ տարեշրջանին ունի 708 աշակերտ: Հետեւեալ վիճակագրական տախտակը գաղափար մը կուտայ աշակերտութեան մասին.

Նախակրթարան	Մանչ	218
»	Աղջիկ	195
Մանկապարտէզ	Երկուսեւ	295
Ընդհ. գումար		708
Այս տարուայ ընթացաւարտացու մանչեր		18
» » » աղջիկներ		10
Թողալով աշակերտներ		283
Զրի		425

Ուսուցիչներ	19
Ուսուցչուհիներ	16
Քարտուղար	1

Թոշակներէ գոյացած ամսական հոյթ. 75 հգ. ոս. (միջին)

Աղգ. Սնտուկէն, ըստ պիտճէի, ստաց-

ուելիք

4:00 > > (տարեկան)

Գալուստեան Վարժարանի շէնքին արտաքին ձեւերը բոլորովին թափած ըլլալով, անհրաժեշտութիւն ներկայացած է փութով նորոգելու զայն, սակայն բացառիկ վարկերու չգոյութիւնը առ այժմ արգելք եղած է շինութեան: Անհրաժեշտ կը նկատուի յառաջիկայ ամառնային արձակուրդին գլուխ հանել այս գործը որ մի քանի հարիւր ոսկի գնահատուած է: Նոյնպէս գրամական պատճառներով յետաձգուած է Կառատան դասարանի վերածուելու ծրագիրը:



ՆՈՒՊԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հիլիոպոլսոյ Ողգ. Նուպարեան Վարժարանը 1925 Մեպո.ին իր Բ. տարեշրջանը սկսաւ: Գալուստեանի Հոգաբարձութիւնը կը վարէ սոյն հաստատութիւնը: Վսեմ. Բարերարին փափաքին համաձայն ժողովս նոյն հոգաբարձութեան անդամ նշանակեց նաեւ Տիար Միհրան Ղազարոսեանը: Շէնքին Բ. յարկը աւարտած ըլլալով, իր նպատակին սկսաւ գործածուիլ տարեշրջանին սկիզբէն: Վարժարանի կարգերուն վրայ աւելցաւ նաեւ նախակրթարանի 4-րդ դասարանը: Հետեւեալ վիճակագրութիւնը կուտայ անհրաժեշտ ծանօթութիւնները այս Հաստա տութեան մասին.

Մանչ աշակերտներ	62
Ոչաշակերտուհիներ	73
Ընդհ. թիւ աշակերտաց	135
Մնայուն ուսուցիչ և ուսուցչուհիք	5
Այցելու » » (Գալստեանէն)	10
Թոշակաւոր աշակերտներ	110
Զրի » »	25
Թոշակներէ գոյացած ամսական հասոյթ	հգ. ոս. 48
Աղգ. Մնտուկէն տարեկան նպաստ	» » 80



ՕՇԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ (ԶԱԿԱԶԻԿ)

Հոգաբարձու թեան դիւանը կազմուած է հետեւեալ
կերպով.

Պր. Յովհ. Սանտալեան, Ատենապետ. Ղազարոս Գըրգ-
էյէրեան, Ատենադպիր. Միհրդատ Մկրեան, Գանձապետ.
Յակոբ Բարթիկեան և Սրապ Գալպանեան, խորհրդականք:

Վարժարանը իր բնական ընթացքը կը շարունակէ
ստանալով նաեւ Ազգ. Սնտուկէն տարեկան նպաստը
80 ոսկի:

ՊԵՂԱՄ ՏԷՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՇԻՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՔ.— Եկեղեցւոյ շինութիւնն յառաջ տարուած է դանդաղ այլ մեթոտիկ կերպով։ Շինութեանց դանդաղութեան գլխաւոր պատճառը եղած են որմանկարներն, որոնց համար անհրաժեշտ էին ծեփերուն մի քանի ամիս չորնալն։ Որմանկարներու գործն յանձնուած է Իտալացի արուեստագէտ Բօլիւչի-ի, որ աւարտած է գըրեթէ ամբողջովին։ Այժմ կը ձեռնարկուի զետեղման խըճանկարներու (մօզայիք) որոնք ժամանած են Եւրոպայէն։ Ի մօտոյ կը ձեռնարկուի նաեւ շրջապատի շինութեան նուազուրդին։

Կը մնան խորանի շինութիւնը, սալայատակումն, ենթաորմերու կճեայ երեսումն, ևն։ Տէ ֆարրօ տան յանձնարարուած դռներն արդէն ի պատրաստութեան են և եպիսկոպոսական աթոռի, նստարաններու և այլ կահազործական աշխատութեանց գործը կ'ուսումնասիրուի։ Ելեքտրական զանգակները, զոր բարեսէր ազգային մը նուիրած է, և գարիօն-ը պիտի հայթայթուին ու զետեղուին ֆրանսական տան մը կողմէ։ Ձեռնարկուած է նաեւ եկեղեցւոյ սպասնեբու պատրաստութեան։

Տիար Նաֆիլեան պատրաստած է նաեւ կառուցուելիք երիցատան յատակագիծը։

ԴՐԱՄԱԿԱՆ.— Ծայսօր Տէ ֆարրօ տան վճարուած է 11887 ոսկի և շուրջ 2108 ոսկի ալ յարակից ծախուց (ճարտարապետներ Պ. Պ. Նաֆիլեանի, Գալճի-ի, Նկարիչ Բօլուչի-ի, Եւրոպա կատարուած յանձնարարութեանց, շրջապատի երկաթեայ բազրիքներու, փոխադրութեանց, հսկող պաշտօնէից, երթեւեկութեան ևն.ի) համար։

Առաջնորդարանիս կողմէ մասնաւոր գիմում կատարուելով կարելի է եղած եկեղեցւոյ շինութեան համար բերուած առարկաներն մաքսազերծ ընել տալ:

ՇՈՒՊՐԱՅԻ ԿԱԼՈՒԱԾ. — Ինչպէս բացատրուած է տպագրեալ տեղեկագրին մէջ, Շուպրայի երկու տուններն ու գետինը ծախուելով, գոյացած գումարը պիտի յատկացուէր Եկեղեցւոյ շինութեան: Ըստ կտակի այդ վաճառումը պէտք է որ կատարուէր Խառն Դատարանի առջեւ և համաձայն այս տրամադրութեան, 1925-ին աճուրդը բացուած է Խառն Դատարանի առջեւ, սակայն և այնպէս նուազագոյն գին որոշուած 9000 ռոկին իսկ առաջարկող չգտնուելով, փակուած է: Միեւնոյն ժամանակ զանազաններ աւելի նպաստաւոր գիներ առաջարկած են եթէ «աւլամիապլը» կատարուի աճուրդը: Այս պարագան հաղորդուած է կտակակատար Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի, որ իր հաւանութիւնը փոխանորդագրի ձեւով յղած է Ս. Առաջնորդ Հօրանուան: Այս տնօրինութեան մասին հաւանութիւնն ստացուած է նաեւ բարիյիշատակ Գր. Եղիայեանի ժառանգորդներուն: Այս կարգադրութենէն վերջ, աճուրդը կատարուած է Առաջնորդարանիս առջեւ և մի քանի աճուրդի նիստերէ վերջ, կալուածը վաճառուած է բարձրագոյն (11500 ռոկի) տուող Թէվֆիք պէյ Խալիլ-ի, Կալուածոց Տնօրէն Տիար Զարէհ Քէսէճեանի ջանքերն այս առթիւ՝ Ժողովս մեծապէս գնահատելի գտած է:



ԵՂԻԱՅԵԱՆ ՊՈՒՐՍ

Վերջին ութամսեայ շրջանին հետեւեալ տնօրինութիւններն եղած են Եղիայեան սանուց մասին.

Նախկին սաներէն Պր. Գառնիկ Զուլումեան զրկուած է Բարիզի Գեղարուեստական վարժարանը հետեւելու. համար ճարտարապետութեան: Իր ձիրքերը ակնյայտնի էին արդէն և ինք, մի քանի ամսուան աշխատանքէ վերջ, յաջողած է իր դասարանին Յ-րգը հանդիսանալ:

Պ. Պ. Համբարձում Գարայեան և Տիգրան Պապիկեան ինչպէս և Օրք. Իսկուհի Գոճանեան և Վիգթորիա Գալֆայեան, տարի մը տեղւոյս Ֆրանսական Լիսէ-ին մէջ մասնաւորաբար ֆրանսերէն լեզուին ծանօթութիւններն զօրացնելէ վերջ զրկուեցան էքս-ի էքսլ նօրմալ Բախմէր-ը: Յաւալի է յայտնել թէ, հակառակ յիշեալ սաներուն և սանուհիներուն բացառիկ ուշիմութեան, անհնար եղած է իրենց հետեւիլ էքսլ նօրմալ-ի իրենց դասարանին և նոյն վարժարանի աընթերցութեան յանձնարարութեան համաձայն անոնք հիմա կը հետեւին էքսլ Բախմէա Սիւրէրիէօր-ի մը դասախօսութեանց:

Անցեալ աշնան Գալստեան վարժարանի նոր շրջանաւարտներէն Եղիայեան սան հռչակուեցան Օր. Արշակուհի Գասապեան և Պ. Պ. Յակոբ Արամեան և Խաչատուր Կանանեան:

Ասոնց հետ միանալով նաեւ նախապէս արդէն իբր Եղիայեան սան դաստիարակող Պ. Հայկ Թորգոմեանը, բոլորը միասին զրուեցան տեղւոյս Ֆրանսական Լիսէ-ն:

ՖԷՐՄԱՆԵԱՆ ՊՈՒՐՍ

Սոյն ֆօնտ-էն օգտուող երկու սաներն՝ Ոհօիկ Արպոյեան և Ստեփան Բանիկեան, երկու ամիսէն կ'աւարտեն իրենց ընթացքը Պէյրուսի Ամերիկեան Համալսարանին Առեւտրական բաժնին մէջ, ինչպէս ըսուած է տպագրեալ տեղեկագրին մէջ:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ

Աղքատախնամ ընկերութեան Ընդհ. Ժողովը գումար-
ուելով 1925-ի աշնանամուտին, Գործադիր Ժողովոյ անգամ
ընտրած է Տեարք Լեւոն Համամճեան, Դաւիթ Մարգարեան,
Գրիգոր Մկրտիչեան և Մելքոն Խաչէրեան: Ժողովիս կողմէ
եւս նշանակուած են Տեարք Սարգիս Գալֆայեան, Եփրեմ
Եփրեմեան և Գրիգոր Խալաթեան:

Ընկերութիւնը իր բնականոն գործունէութիւնը յառաջ
տանելով ամսական իբր 200 ոսկի նպաստ բաշխած է զը-
լեթէ նոյնքան թիւով աղքատներու:

Ընկերութեան անդամներու թիւը մօտաւորապէս 200 է
և անգամավճարներէ հազիւ ամսական 17-18 ոսկի կը գո-
յանայ: Աղգ, Սնտուկը ամէն ամիս կը տրամադրէ 135 ոսկի
և 88 ոսկի ալ վիճակահանութեան գումարէն կը տրուի:
Վերջին ութամսեայ շրջանին Ընկերութիւնը Թատերական
ներկայացում մը սարքած է Էդպէքիյէ-ի թատրոնին մէջ,
որմէ ապահովուած զուտ հասոյթը եղած է իբր 60 ոսկի:

Ս. Առաջնորդ Հայրը Վարչապետութեան մօտ գիմում
կատարելով յաջողած է վիճակահանութեան տոմսերու թիւը
20-էն 30 հազարի բարձրացնել տալ: Էլիաս Ֆիրուզ կա-
պալառուն իր պայմանագրութեամբ յանձն առած էր այդ
պարագային՝ իր վճարած գումարին մէկուկէսը վճարել:
Այժմ ձեռնարկուած է այդ տարբերութիւնը եղող 575 ոսկին
գանձելու:

Ընկերութիւնը ամէն տարի իբր 200 ոսկի կը ծախսէ
հիւանդանոցներու և դեղօրէից համար: Սեփական հիւան-
դանոց մը ունենալու գաղափարին իրականացումը քանի որ
ներկայիս հնարաւոր չերեւիր, Ժողովս կը թելադրէ որ
Ղպտիններու և Հրէից նորակառոյց հիւանդանոցներու վար-
չութեանց մօտ գիմում կատարուի, մի քանի ձրի անկողին
ապահովելու համար համայնքիս աղքատներուն:

ՈՐԲՈՒՀԻՆԵՐ

Պատ. Որբապաշտպան մարմինը իր հին կազմով կը շարունակէ իր գործունէութիւնը:

Վերջին 8 ամսուան ընթացքին Գահիրէի 395 որբուհիներուն վրայ աւելցած են 27 ևս, Յունաստանէն դրկուած, որով Գահիրէի մէջ ներկայիս կը գտնուին սկզբնական արձանագործեամբ 420 որբուհիներ, և Եգիպտոսի մէջ ընդամէնը 713:

Հետեւեալ վիճակագրական պատկերը գաղափար մը կուտայ անոնց մասին.



Ամուսնացեալ	41
Արտասահման մեկնած	21
Ազգականներու յանձնուած (Եգիպտոսի մէջ)	14
Յիմարանոց	1
Հեղուանի Դարմանատունը	2
Մեռած	3
Ընտանիքներու քով տեղաւորուած	340
Ընդամէնը	422

Վերոգրեալ 340 որբուհիներէն իբր 60-ը թոշակով կը ծառայեն տուններու մէջ 100 - 350 դահեկան ամսականի փոխարէն: Որբուհիներու մէջ, ապագայի մտահոգութեամբ, հետզհետէ կ'աճի դրամով աշխատելու փափաքը. բան մը

որ թէեւ տեսակետով մը քաջալերելի է. սակայն զերծ չէ անպատեհութիւններէ ևս:

Որբուհիներուն այս կերպով խնայած դրամներն Որբապաշտպան մարմնոյ կողմէ և Առաջնորդարանիս խողովակով, տոկոսով ի պահ կը դրուին դրամատանց մէջ, ուր արդէն 230 օսկի գոյացած է սոյն եղանակաւ, առանց հաշուելու որբուհիներու Բրէտի ֆօնսիէ-ներն: Որբապաշտպան մարմնոյն կողմէ որբուհիներուն հաշուընթացի ընկալագրեր կը տրուին երեք ամիսը անգամ մը պանքաներու դրութեամբ:

Նկատելով որ որբապաշտպան գործը տարիներով պիտի շարունակուի և պէտք ունի տեւական պիւտճէի, և նկատելով որ Կառավարութիւնը վերջերս աւելի թոյլատու ոգի մը կը ցուցնէ վիճակահանութեանց կազմակերպութեան մասին, Ժողովս պիտի թելադրէր որ յաջորդ Բաղ. Ժողովը նկատի ունենար Որբապաշտպան մարմնոյ համար եւս վիճակահանութեան արտօնութիւն ձեռք բերելու խնդիրը:



A¹¹
13833

Ո Ր Բ Ե Ր

Ամերիկեան Նպաստամատոյցը Առաջնորդարանիս բա-
րոյական գործակցութիւնը խնդրած էր Գահիրէի մէջ մանչ
որրերու Հօմ մը բանալու համար: Ժողովս սիրով ընդ առաջ
երթալով առաջարկութեան, կազմեց յանձնախումբ մը հե-
տեւեալ Պատ. Ազգայիններէն.

Տեարք Տքթ. Ֆ. Շէտիաք
Տքթ. Ղ. Արթինեան
Թ. Զաղացպանեան
Բ. Պալըզճեան
Գ. Զազըճեան (հրաժարած)
Վեր. Հ. Խանդամուր

Սոյն յանձնախումբին կ'անդամակցին նաեւ՝ Ամերիկեան
Նպաստամատոյցի կողմէ.

Տքթ. Վ. Էտի և
Մր. Թէմպլին

Առաջնորդարանը սոյն գործին մէջ որեւէ նիւթական
պատասխանատուութիւնը չէ ստանձնած և գործը կը կա-
ռավարուի Նպաստամատոյցի պիւտճէով: Հօմ-ին բացումը
կատարուած է 1925 դեկտ. 20-ին, ի Շուպրա վարձուած
մասնաւոր շէնքին մէջ, նախագահութեամբ Ամերիկեան
դեսպան Տքթ. Մօրթօն Հաուլ-ի, որ շատ մօտէն կը հետա-
քըրքրուի այս հաստատութեան գործերով, և օրհնութեամբ
Ս. Առաջնորդ Հօր:

Տէր և Տիկին Խանիկեան ձեռնհասօրէն կը վարեն տը-
նօրէնութեան գործը: Թունաստանէն բերուած են ընդամէնը
108 սաներ, որոնցմէ 13-ը վերջնականապէս իրենց պաշտ-
պաններուն յանձնուած ըլլալով, առնոց տունը կը բնակին
ու կը սնանին: Ներկայիս շէնքին մէջ կը մնան 95 սաներ:
Թիշեալները կ'աշխատին հայ և օտարազգի առեւտրականնե-

րու և արհեստաւորներու մօտ 20-25 դահեկան շաբաթականով, և անմիջապէս որ ի վիճակի ըլլան ինքնաբաւ ըլլալու, պիտի արձակուին Հօմ-էն: Հետագայ վիճակագրական տախտակը գաղափար մը կուտայ արհեստներու մասին:

Կազմարար	2	Փորագրիչ	4
Ասեղնագործ	2	Ձուլիչ	3
Շապկագործ	5	Կահագործ	5
Ոսկերիչ	5	Դեղագործ	3
Դարբին	3	Շօֆէօր	2
Կօշկակար	10	Մեքենագէտ	5
Տպագրիչ	1	Դերձակ	4
Գրաշար	3	Գորգագործ	2

Երաժշ. գործիք նորոգող	1
Ուսանող Ազգ. Վարժարան	3
Գրասենեակի կառսօն	1
Հուսանկարիչ	1
Նպարավաճառ	6
Յանձնակատար	1
Ձինկօկրաֆ	7
Առեւտրական	12

Ս. Առաջնորդ Հօր կողմէ կազմակերպուած է գիշերային գառախօսութեանց ընթացք մը, բացի անգլիերէնի, արաբերենի և թուրքերէնի լեզուներէն: Գառնեցիկներէն Ս. Առաջնորդարանո նիւթական պատասխանատուութեան որեւէ բաժին չէ ստանձնած Հօմի նախաձեռնութեան մէջ, այսու ամենայնիւ Համայնքիս ծոցին մէջ գտնուող՝ ազգին սոյն սիրելի զաւակաց կարեացը հանդէպ Ս. Առաջնորդ Հայրը չկարենալով անտարբեր գտնուիլ, նուիրահաւաքութեան մի քանի կարեւոր ձեռնարկներ կատարած է, մին կաղանդի առթիւ նուէրներու համար, և միւսը Ս. Զատիկի առթիւ հագուստի համար: Սոյն երկու ձեռնարկներն ալ յաջողութեամբ պսակուած են և Ամերիկեան Դեսպանին ջերմ զնահատութեան արժանացած:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԵԿԼԻՍ ՀԱՍՊԻ.— Տեղեկագրով ընդգրկուած շրջանին կարեւորագոյն դէպքը կրնայ նկատուիլ ժառանգական խնդրոց մասին կառավարութեան ըրած նոր տնօրինութիւնը: Արդարութեան Նախարարութիւնը, 1925 Նոյ. 14 թուակիր շրջաբերականով մը, յիշեցնելով պաշտօնաթերթին մէջ երեւցած Մէկլիս Հասպի-ներու օրէնքը, հրամայած է բոլոր պատրիարքարաններուն, 1926 մարտ 3-էն սկսեալ չի զբաղուիլ անչափահաս, բացակայ և տկարամիտ ժառանգորդաց իրաւանց պաշտպանութեամբ և յարակից գործերով և մինչեւ այդ թուականը պատրիարքարաններու կարգադրութեան ենթարկուած նմանօրինակ ժառանգական խնդիրներէն բոլոր առկախները իրեն յանձնել, պատրաստելով վիճակագրական ցուցակներ ըստ կցեալ նմոյշի:

Խնդիրը անշուշտ մեծ կարեւորութիւն ունի Պատրիարքարաններու առանձնաշնորհմանց տեսակէտէն, սակայն և այնպէս մեզմէ շատ աւելի կարեւոր և ստուարաթիւ համայնքներու գիմումներն անհետեւանք մնացած բլլալով, մեզ համար ընելիք չէր մնար, քանի որ եղածը առաջարկ չէր այլ հրաման:

Ըստ այնմ, յետ մանրակրկիտ քննութեան, պատրաստուեցան թողո՞ններու ցուցակներ, թիւով 15, և պիտի ներկայացուին Արդարութեան Նախարարութեան, Պայրամէն անմիջապէս յետոյ:

Դարձեալ կառավարութիւնը Մէկլիս Հասպի-ներու անգամակցելու համար, ձեռնհաս Ազգայնոց անուններն ուղած

րլլալով ստիպողաբար՝ ժողովիս կողմէ հաղորդուեցան հետեւեալ անունները .

Մէթր Սօսօյեան

Մէթր Եագուպ Սարգիս

Հապիպ պէյ Գառնուկ

Տքթ. Ս. Ժամկոչեան

Տիար Հայկ Ինայէթեան

Տիար Արմ. Պետեւեան

Տիար Գէորգ Մազլըմեան

ՀԱՇՈՒԵՑԱՐԴԱՐԻ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԹՈՂՈՆՆԵՐ . — Վերջին ամիսներու ընթացքին հետեւեալ կարեւոր թողօններու մասին վերջնական կամ մասնակի հաշուեյարդար կատարուած է .

Գէորգ Ակոբովիչ , Հրանդ Հացունի , Գալուստ Անգրանեան , Խնովք Գալայճեան , Կարապետ Սարաճեան , Յարութիւն քհ. Յակօբեան եւն . Իսկ հանգ. Բ. Ճօրճիանիի ժառանգութեան թեկնածուներն դատական միջոցներով կը հետապնդեն իրենց կարծեցեալ իրաւունքները :

ՀԱՇՈՒԱԿԱՆ . — Հաշուակալութիւնը յայտնելով որ երկար տարիներէ ի վեր կարգ մը թողօններ փոքր պահանջող կշիռներ ունին հաշուետոմարաց մէջ , յետ քննութեան ժողովս որոշեց փակել այդ հաշիւները՝ հաշուակցելով այդ գումարները գանձելի քասէմիէ-ներու և այլ սակերու հետ :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Թեմական Ժողովոյ պակսած 10 երեսփոխաններու ընտրութիւնը, Ազգ. Սահմանադրութեան և Վարչական հրահանգի տրամադրութեանց համաձայն, 1925 փետր. 28-ին կատարուեցաւ և երեսփոխան ընտրուեցան հետեւեալ պատ. ազգայինք:

Տեսարք	քուէով
Հայկ Ինայէթեան	733
Լեւոն Կոկանեան	724
Էօթէն Բարազեան	722
Կարապետ Սէֆէրեան	717
Տքթ. Ա. Տէր Մարգարեան	705
Գէորգ Տիւլկէրեան	703
Սերովբէ Պէրպէրեան	690
Երուանդ Եազըճեան	685
Կարապետ Գանարեան	676
Յովհաննէս Սէքսէնեան	674

Ընտրական գործողութեանց մասին Ժողովս արդէն նախապէս մանրամասն տեղեկագիր ներկայացուցած ըլլալով Պատ. Ժողովիդ, հոս աւելորդ կը համարենք մանրամասնութիւններ յիշատակել:



ՅԱՐԱՐԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆՔ

Վարչապետ Վսեմ. Զիվէր փաշայի հետ Առաջնորդ Ս. Հայրը զանազան առիթներով ունեցած է տեսակցութիւններ, արժանանալով Ն. Վսեմութեան բացառիկ մեծարանաց։

Միջեկեղեցական եղբայրակցութեան ժողովներուն Ս. Առաջնորդ Հայրը կամ Դիւանապետը ներկայ գտնուած են, ի մասնաւորի Արչտիքն Լիսթը-ի ընծայման, Վիքթորիա Հոթըլ-ի մեծ հացկերոյթին, եւայլն։

Ամերիկացի հանգուցեալ Միսիօնարներու հոգեհանգստեան տարեկան պաշտօնը կատարուած է այս տարի եւս, ի ներկայութեան Ամերիկ. Դեսպան Վսեմ. Տքթ. Հաուլ-ի և ամերիկեան գաղութի ստուար մասին։



ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ

Ժողովս, վերջին ամիսներու ընթացքին, նկատի ունենալով շուրջ 6 տարիներէ ի վեր իբր կալուածոց վերահըսկիչ Պր. Զ. Քէսէճեանի բարուոք ծառայութիւններն, անոր պաշտօնը բարձրացուց կալուածոց Տնօրէնութեան:

Տպագրեալ տեղեկագրին մէջ վերջին պահուն իբր ծանօթութիւն դրուած էր Հեսառի անբեր ագարակին 9 տարուան պայմանաժամով Ֆէհմի Հաննայի վարձու տրուած ըլլալը: Վերջին ամիսներու ընթացքին վարձակալական կարեւոր պայմանագրութիւն ըլլալով յիշատակութեան արժանի է Տէլկայի 250 ֆետտանի վարձակալութիւնը Ապտէլ Համիտ Խալիլի, 3 տարուան համար և ֆետտանը 985 դահկէն, ինչ որ գնահատելի յաջողութիւն մը կրնայ նկատուիլ ի մտի ունենալով նախորդ գիներն: Եթէ կարելիութիւն ըլլար ագարակին մէջ 2 ջրհորներ բանալ, ֆետտանը 1200 դահկէն կարելի պիտի ըլլար վարձակալ գտնել. բայց այդ ջրհորները իսկոյն նախ քան այդ պայմանագրութիւնը բանալ անկարելի եղած է: Յաջորդ Բաղ. Ժողովոյ համար նկատառման կարեւոր պարագայ մ'է այս կէտը:

Ժողովս յարմար դատած է Շէյխ Էթմանի մէջ ջրաբաշխական տեսակէտներով կենսական կարեւորութիւն ունեցող մէկ քրաթ հողամաս մը գնել 14 եգ. ոսկւոյ փոխարէն:

Նկատի ունենալով որ Շէյխ Էթմանի կէզիրէի հողերէն իբր 60-62 ֆետտան հողամաս մը Նեղոսը քշած է, կալուածոց Պր. Տնօրէնն հարկ եղած կարգագրութիւններն ըրած է Ուոգմանց Լ. Շրջանակի Ընդհ. Երկրաչափին հետ, Նեղոսի այդ մասի ջուրերուն ընթացքը փոխել տալու համար, շի-

նելով քարէ թումբեր, Համամիյէթ Զօր-էն սկսեալ, այս կերպով ապահովելու համար հողերու յաւելում:

Շէխ Էթմանի վարձակալներէն Մուսա-Ալի-Պարսի, Սիւթէվէլի Համիտէ-ի էքսբէութիզի, Մուհամմէտ Պիլալի և այլոց գէմ բացած դատերն շահած է Առաջնորդարանս և յիշեալներուն պարտքերը գանձուած են:

Իսկ Էքֆասի մէջ ձեռնարկուած է ջրհանի կցուած խողովակներուն մաքրագործման և նորոգութեան գործին:

ՄԱՍՆԱԴԷՏ ՔՆՆԻՉ.— Ժողովս այս յաւելուածով կը կրկնէ վճարեալ և մասնագէտ քննիչ մը վարձելու և ագարակներուն շահագործման և մատակարարութեան մասին առնոր տեղեկագիրն ստանալու մասին նախապէս իր ըրած թելադրութիւնը:

Ժողովս պաշտօնէ քաշուելէ առաջ ամենաստիպողական հրահանգներ տուած է կալ. Տիար Տնօրէնին, Հիսասի և Էքֆասի վարձակալութեանց երաշխաւորագիրը պատրաստելու:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ 1925 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Տպագրեալ տեղեկագրին մէջ ակնարկուելով ընթացիկ (1925) տարեշրջանի համար պատրաստուած պիւտճէին, ըսուած է թէ տարեշրջանը աւարտած չըլլալով, կարելի չըլլար ըսել թէ կանխատեսուած հասոյթներն ու ծախքերը ինչ համեմատութիւններով պիտի իրականանան:

Այժմ տարեշրջանը աւարտած ըլլալով, կը տեսնենք կցեալ հաշուեկշիռէն թէ 1925 տարեշրջանին ընթացքին իրադրո՞ւած հասոյթից համագումարը եղած է 14,888 հգ. ոս. 649 միլիէմ, իսկ ծախուց համագումարը եղած է 14,225 հգ. ոսկի 834 միլիէմ, որով Ազգ. Մետուկը ունեցած է 662 հգ. ոսկի 615 միլիէմ հասոյթից առաւելութիւն մը: Այս կերպով Առաջնորդարանի և իր զանազան ճիւղերուն տարիներու ընթացքին իրենց հասոյթներէն աւելի ծախսած 2,371 հգ. ոսկի 754 միլիէմէն կրնանք զեղչել վերոգրեալ 662 հգ. ոսկի 615 միլիէմ-ը, որով Առաջնորդարանի և զանազան Հոգաբարձութեանց Ազգ. Մետուկի հանդէպ ունեցած պարտքը կ'իջնէ 1,709 հգ. ոսկի 139 միլիէմ-ի:

Ինչպէս կը տեսնուի հաշուեկշռի քննութենէն, ծախուց և հասոյթից կշիռը մեծապէս ի նպաստ հասոյթից փոխող գլուխը Աղքատաց Հոգաբարձութեան հասոյթից գլուխի առաւելութիւնն է, որով կը գոցուին միւս պարտական Հոգաբարձութեանց բացերն և աւելցուք մ'ալ կը մնայ: Այս մասին տպագրեալ տեղեկագրին մէջ հարկ եղած բացատրութիւնը տրուած է:

Իսկ Ազգ. Մետուկին տնտեսական ընդհ. և իրական կացութեան մասին նոյն տեղեկագրին մէջ անհրաժեշտ և մանրամասն բացատրութիւններն տրուած ըլլալով, աւելորդ կը համարենք հոս կրկնել զանոնք, Միայն կ'արժէ յիշել թէ հաշուեյարդարի պատկերը երբ պարզենք, Ազգ. Մետուկին պահանջքն ու պատրաստը փոքր համեմատութեամբ աւելի կ'երեւին ընդհ. պարտքէն:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կրօն. Ժողովը վերջին 8 ամսուան ընթացքին իր հին կազմով և ատենապետութեամբ Արժ. Տ. Յարութիւն քհն. Սարգիսեանի, գումարած է 16 նիստ և զբաղած 21 ամուսնական խնդիրներով որոնցմէ լուծուած են 2-ը,

Տ. և Տիկ. Արմենակ Յովհաննէսեանի ամուսնութիւնն, այրն արտօնելով վերամուսնանալու և կինը զրկելով այդ իրաւունքէն.

Տ. և Տիկ. Յովակիմ Քսաքեանի ամուսնութիւնն, կինն արտօնելով վերամուսնանալու:

Մնացեալներէն 4-ը յղուած են Խառն Ժողովոյ, 2-ը վերջացած են հաշտութեամբ, իսկ մեծ մասին քննութիւնը կը շարունակուի դեռ:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

Նոյն ժամանակաշրջանին խառն ժողովն ալ գումարուած է 6 անգամ եւ զբաղած՝ 9 ամուսնական խնդիրներով եւ 3 վերամուսնութեան արտօնութեան խնդրանքներով որոնք շնորհուած են :

Վերոյիշեալ 9 ամուսնութիւններէն 5 - ը լուծուած են , 1-ը վերջացած հաշտարար կարգադրութեամբ , իսկ 3-ին քննութիւնը դեռ կը շարունակուի :

Լուծուած ամուսնութիւններն են ,

1. — Տ. և Տիկ. Ստեփան Գարակէօզեան ամուսն . խնդիր : Այր թէ կին զրկուած վերամուսնութեան իրաւունքէ :
2. — Տ. և Տիկ. Հրանդ Շիշլեան (կինը Ֆիմի ծն. Մարկեան, արտօնեալ վերամուսնութեան , այրը բժշկական վկայական ներկայացնելէ վերջ միայն արտօնուած) :
3. — Տ. և Տիկ. Յովհ. Հիւրմիւզեան (կինը Վիքթորիա արտօնուած վերամուսնութեան , այրը զրկուած անպայման ժամանակաւ) :
4. — Տ. և Տիկ. Արմենակ Արեւելեան (ինքնին լուծուած , զի կինը իսլամացած է) :
5. — Տ. և Տիկ. Տելեմաք Գարակէօզեան (երկու կողմն ալ զրկուած վերամուսնութեան իրաւունքէ , անպայման ժամանակաւ) :

ՎԵՐԶԱԲԱՆ

Իր վարչական և հաշուական գործառնությունց համարատուութեան ոոյն յաւելուածական տեղեկագիրը մատուցանելով, Ժողովս պարտք կը համարի իր սրտագին շնորհակալիքն յայտնել իր նախագահին, Բարձր. Տ. Թորգոմ Ս. Արքեպ. Գուշակեանի, իր թանկագին առաջնորդութեան և գլխակցութեան համար, որով ան մեծապէս դիւրացուցած է Ժողովիս աշխատանքը, ներկայացեալ բոլոր կարգի խընդիրներու լուծման նպատակով իր երկարամեայ փորձառութեան և քաղաքեղուն աշխատութեան անգնահատելի սատարովը:

Պարտք կը համարենք նաեւ մեր խոր շնորհակալիքն յայտնել Պատ. Ժողովիդ, այն վստահութեան համար որով միշտ պատուած է զմեզ, ինչպէս նաեւ մեր երախտագիտութիւնը զանազան Հոգաբարձութեանց և Յանձնախումբերու Ժրջան անդամներուն, որոնց գործակցութեամբը կրցինք ի գլուխ հանել առաջադրուած նպատակներն:

Ժողովիս որդեգրած գործունէութեան ուղղութիւնը եղած է այն զոր Ս. Առաջնորդ Հայրը եւս ի սկզբանէ անտի իւրացուցած է, այսինքն գործել անշշուկ ընթանալով պարտականութեան ուղեգծէն, առանց մեծաշօինդ յայտարարութիւններու, տալով միայն օրինաւոր համարատուութիւն: Մեր տպագրեալ տեղեկագիրը և ներկայս կը կազմեն մեր պաշտօնական համարատուութիւնն Ժողովրդեան ներկայացուցիչներէ կազմուած Պատ. Ժողովիդ: Իսկ մեր ամբողջ պաշտօնավարութեան ընթացքին մամուլյ միջոցաւ Ժողովուրդը գիտակ պահած ենք մեր գործառնութեանց կարեւոր մասերուն:

Հարեւանցի ակնարկ մը տեղեկագրին կը բաւէ ցոյց տալու թէ սոյն կարճատեւ շրջանին կառուցուած են եկեղեցի և դպրոց, գնուած է գերեզմանատուն, բացուած են որբանոց, դպրոց, պատասպարուած են՝ սնուցուած ու յանձանձուած՝ հարիւրաւոր որբուհիներ, վերակազմուած են Առաջնորդարանի և դպրոցի պաշտօնէութիւններն, իրագործուած են խնայողութիւններ և ձեռք բերուած է հասոյթներու զգալի առաւելութիւն:

Իսկ եթէ կամքէ անկախ պատճառներով գործուած են թերիներ կամ մոռցուած կարեւոր տնօրինութիւններ, ժողովս կը յուսայ թէ Պատ. Թեմական Ժողովդ նորընտիր Քաղ. Ժողովին ցոյց պիտի տայ հարկ եղած ուղղութիւնն լրացնելու համար այդ պակասները:

Խորին յարգանաց հաւաստեօք


ի դիմաց Քաղ. Ժողովոյ

Ասեմադպիր

Ասեմապետ

ՏԲ. Ա. ՏԵՐՄԱՐԳԱՐԵԱՆ

ՏԲ. Ս. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ



ԾԱՆՈթ.— Գաւառական վարչութեան Քաղ. Ժողովոյ երկամեայ գործունեութեան տեղեկագիրը, ինչպէս նաեւ ներկայ յաւելուածը Թեմական Ժողովի 18 Ոգոստոս 1926-ի 111 բղ. նիստի, մէջ վաւերացեալ է:

Ասեմադպիր Թեմական Ժողովոյ

ԿԱՐԱՊԵՏ ՍԷՖԵՐԵԱՆ





ЦЕНА

13833

Бук.	№	88
Ц.	Р.	60

ՀԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0012352